**03.01.2025թ.**
**O.AB.100.12CIB.PIED.0.24695.24**

*Բենեֆիցիար՝*
*Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն*

**ԵՐԱՇԽԻՔ No. O.AB.100.12CIB.PIED.0.24695.24**

1. Սույն երաշխիքը, ինչպես նաև սույն երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում են Հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից ՀԿԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/3 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին «ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) մասնակցելուց բխող՝ նույն ծածկագրով հրավերով սահմանված պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել 2,061,125.00 (երկու միլիոն վաթսունմեկ հազար մեկ հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի թիվ 900008000466 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է Բենեֆիցիարի կողմից ՀԿԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/3 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով Պրինցիպալի կողմից հայտի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված մեկ հարյուր քսան աշխատանքային օր, բայց ոչ ավել, քան մինչև 07 հուլիսի 2025թ. ներառյալ: Սույն Երաշխիքի տրամադրման փաստի վերաբերյալ տեղեկատվությունը՝ Երաշխիքի համարը, տրամադրող բանկի անվանումը և սույն Երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագիրը՝ առանց գումարի չափի մասին նշման, Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից (tradefinance@ameriabank.am) ուղարկում է սույն կետում նշված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ gnumner@harkadir.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում է հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը և Երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե՝

8.1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին.

8.2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Վճարային գործիքների և էքսպոռտ գործառնությունների բաժնի ղեկավար՝**
**Գայանե Միրզոյան**

Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
+374 10 56 11 11
+374 12 56 11 11
ameriabank.am
info@ameriabank.am

#bankaboutyou

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ M29114

ք. Երևան "03" հունվարի 2025թ.

«Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը (գրանցված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 08.09.1992թ. որոշմամբ, գրանցման համար 50, վկայական թիվ 0154, հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 2), այսուհետ՝ **«Երաշխավոր»**, ի դեմս Երաշխավորի անունից հանդես եկող իրավասու անձի, մի կողմից, և,

**«ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ-ն (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Էրեբունու փ., 12/4)**, այսուհետ՝ «Պրինցիպալ», **ի դեմս գործադիր մարմնի ղեկավար Կամո Մելքոնյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա**, մյուս կողմից,

միասին անվանվելով «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, կնքեցին սույն լրացուցիչ Համաձայնագիրը /այսուհետ՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

## *1. <u>Համաձայնագրի առարկան</u>*

1.1. Համաձայնագիրը հանդիսանում է կողմերի միջև **23.10.2017թ. կնքված թիվ 043834** Հիմնական պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ բաղկացուցիչ և անբաժանելի մասը:

Համաձայնագրի նկատմամբ կիրառվում են Պայմանագրի դրույթները, եթե այլ բան նախատեսված չէ Համաձայնագրով:

1.2. Համաձայնագրով Երաշխավորը պարտավորվում **է** ***Հարկադիր կատարումն ապահովող ծառայության*** /այսուհետ՝ Բենեֆիցիար/ օգտին թողարկել բանկային երաշխիք /այսուհետ՝ Երաշխիք/՝ **2,061,125.00 (երկու միլիոն վաթսունմեկ հազար մեկ հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ** գումարի չափով /այսուհետ՝ Երաշխիքի գումար/, ի ապահովումն

☐ *1.2.1. Բենեֆիցիարի և Պրինցիպալի միջև կնքվող ______________ պայմանագրից*

☒ *1.2.2. Պրինցիպալի և Բենեֆիցիարի միջև պայմանագիր կնքելու նպատակով Բենեֆիցիարի կողմից ՀԿԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/3* ***ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին*** *Պրինցիպալի մասնակցությունից* ______________-ից

☐ *1.2.3.* ______________

բխող՝ Պրինցիպալի պարտավորությունների /այսուհետ՝ Հիմնական պարտավորություն/ պատշաճ կատարման՝ պայմանով՝ Բենեֆիցիարին վճարել Երաշխիքի գումարի սահմաններում վերջինիս կողմից պահանջված գումարը՝ Բենեֆիցիարի գրավոր պահանջը ստանալու դեպքում /եթե Երաշխիքի տեքստով նախատեսված չէ, որ Երաշխիքի գումարը կամ դրա մի մասը Բենեֆիցիարին վճարվում է վերջինիս կողմից Պահանջը հիմնավորող պատշաճ ձևակերպված բոլոր փաստաթղթերը Երաշխավորին ներկայացնելու դեպքում/:

1.3. Երաշխիքի պայմանները որոշվում են Համաձայնագրով և Երաշխավորի կողմից տրամադրված Երաշխիքով:

1.4. Երաշխիքը տրամադրվում է

☐ 1.4.1. այլ բանկի կողմից այն պարտադիր հաստատելու պայմանով,

☒ 1.4.2. առանց այլ բանկի կողմից այն հաստատելու պայմանի:

## *2. <u>Երաշխիքի տրամադրման պայմանները և վճարումների կատարման կարգը</u>*

2.1. Երաշխիքը տրամադրվում է **186 օր** ժամկետով, որը գործում է **մինչև 07 հուլիսի 2025թ. ներառյալ**:

2.2. Երաշխիքը տրամադրվում է Երաշխավորի իրավասու մարմնի կողմից ստորագրված և կնքված:

2.3. Երաշխիքի տրամադրման համար Պրինցիպալը Երաշխավորին ներքոնշյալ ժամկետներում վճարում է կոմիսիոն վճար՝ Երաշխիքի գումարի տարեկան **3.0 /երեք/** տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան Երաշխիքի գործողության ողջ ժամկետի համար 20,000.00 /քսան հազար/ ՀՀ դրամ, ընդ որում Երաշխիքի գործողությունը վաղաժամկետ դադարելու դեպքում գանձված կոմիսիոն վճարը վերադարձման ենթակա չէ.

☒ 2.3.1. <u>ամսական</u> կտրվածքով՝ յուրաքանչյուր ամսվա ամսի “15”-ին կամ վերջինիս ոչ աշխատանքային օր լինելու դեպքում՝ հաջորդող աշխատանքային օրը,

☐ 2.3.2. Համաձայնագրի կնքման պահին:

2.4. Բենեֆիցիարի պահանջի դիմաց Երաշխիքի գումարը կամ դրա մի մասը Բենեֆիցիարին վճարելու դեպքում Պրինցիպալը, Համաձայնագրի 3.4.5 ենթակետում նշված պարտավորությունը կատարելուց բացի, Երաշխավորին միանվագ վճարում է նաև միջնորդավճար՝ Բենեֆիցիարին վճարված գումարի 0.5 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան 50,000.00 /հիսուն հազար / ՀՀ դրամ:

2.5. Երաշխիքի բովանդակության մեջ (տեքստում) նախատեսված լինելու դեպքում Երաշխիքի (այլ բանկի կողմից Երաշխիքի հաստատման դեպքում՝ նաև Երաշխիքի հաստատման) հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում են նաև *Uniform Rules for Demand Guarantees, ICC Publication No. 758 (URDG 758)* կանոնները:

2.6. Երաշխիքի գործողությունը կարող է մասնակի կամ ամբողջովին վաղաժամկետ դադարել Բենեֆիցիարի կողմից Երաշխիքով իր իրավունքներից հրաժարվելու հետևանքով Երաշխավորին երաշխիքային պարտավորություններից ազատելու մասին համապատասխան գրություն ստանալու դեպքում:

2.7. Պրինցիպալը հավաստում է, որ Համաձայնագիրը կնքելիս ծանոթացել է իր դիմումի և Համաձայնագրի համաձայն Երաշխավորի կողմից թողարկվող Երաշխիքի վերջնական տեքստին և ամբողջությամբ համաձայն է դրա բովանդակության հետ՝ գիտակցելով, որ Երաշխավորի կողմից Բենեֆիցիարի՝ Երաշխիքի պայմաններին համապատասխանող գրավոր պահանջը /այսուհետ՝ Պահանջ/ բավարարելու դեպքում Երաշխավորին որևէ առարկություն չի կարող ներկայացնել, նույնիսկ եթե նման առարկություն Պրինցիպալի կողմից կարող էր ներկայացվել Պրինցիպալ-Բենեֆիցիար հարաբերություններում:

2.8. ՀՀ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին Երաշխիքն արտարժույթով տրամադրելու դեպքում Համաձայնագրից բխող՝ վճարման ենթակա գումարները գանձվում են Պրինցիպալի՝ Երաշխավորի մոտ գործող Երաշխիքի արժույթով հաշիվներից, իսկ դրանց վրա անհրաժեշտ միջոցների բացակայության դեպքում՝ նաև այլ արժույթով հաշիվներից, որի դեպքում արժույթների փոխարկումն իրականացվում է այդ պահին Երաշխավորի մոտ գործող համապատասխան փոխարժեքով:

2.9. Եթե Պրինցիպալը ՀՀ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ է կամ ՀՀ ռեզիդենտ, ապա.

2.9.1. Վճարման ենթակա գումարի մարմանն ուղղվող գումարները գանձվում են Պրինցիպալի՝ Երաշխավորի մոտ գործող Երաշխիքի արժույթով հաշիվներից, իսկ դրանց վրա անհրաժեշտ միջոցների բացակայության դեպքում՝ նաև այլ արժույթով հաշիվներից, որի դեպքում արժույթների փոխարկումն իրականացվում է այդ պահին Երաշխավորի մոտ գործող համապատասխան փոխարժեքով, իսկ

2.9.2. Կոմիսիոն վճարների, Միջնորդավճարների և տուժանքի վճարմանն ուղղվող գումարները գանձվում են Պրինցիպալի՝ Երաշխավորի մոտ գործող դրամային հաշիվներից, իսկ դրանց վրա անհրաժեշտ միջոցների բացակայության դեպքում՝ նաև այլ արժույթով հաշիվներից, որի դեպքում արժույթների փոխարկումն իրականացվում է այդ պահին Երաշխավորի մոտ գործող համապատասխան փոխարժեքով:

## 3. *Կողմերի իրավունքներն ու պարտականությունները*

3.1. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները սահմանված են Պայմանագրով: Բացի այդ.

**3.2. Երաշխավորն իրավունք ունի՝**

3.2.1. ցանկացած ժամանակ ստուգել Հիմնական պարտավորությամբ Պրինցիպալի կողմից ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքը, ինչպես նաև այդ նպատակով Պրինցիպալի մոտ կատարել Հիմնական պարտավորությանը վերաբերող ֆինանսատնտեսական գործունեության մոնիտորինգ, ի կատարումն որի Համաձայնագրի գործողության ընթացքում Պրինցիպալը պարտավոր է Երաշխավորի պահանջով վերջինիս ներկայացնել ցանկացած տեղեկություն կամ հաշվետվություն Հիմնական պարտավորության կատարման ընթացքի վերաբերյալ, ներառյալ հաշվապահական ցանկացած փաստաթուղթ:

**3.3. Երաշխավորը պարտավոր է՝**

3.3.1. Բենեֆիցիարին հանձնելու նպատակով Երաշխիքը հանձնել Պրինցիպալին Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից /իսկ եթե ի ապահովումն Համաձայնագրով Պրինցիպալի ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման՝ բացի Պայմանագրով նախատեսված գրավի առարկաներից գրավադրվում է նաև այլ գույք, ապա այդ գույքի նկատմամբ Երաշխավորի գրավի իրավունքը ծագելու օրվանից/ 1 /մեկ/ բանկային օրվա ընթացքում,

3.3.2. Երաշխիքի գումարը կամ դրա մի մասը վճարել Բենեֆիցիարին վերջինիս կողմից ներկայացված՝ Երաշխիքի պայմաններին համապատասխանող գրավոր Պահանջը Երաշխիքի գործողության ընթացքում ստանալուց հետո 3 /երեք/ բանկային օրվա ընթացքում, եթե Երաշխիքում և/կամ Պահանջում ավելի երկար ժամկետ նշված չէ:

Երաշխիքի տեքստով նախատեսված լինելու դեպքում Պահանջի հետ միասին Բենեֆիցիարը Երաշխավորին պետք է ներկայացնի նաև Պահանջը հիմնավորող պատշաճ ձևակերպված բոլոր փաստաթղթերը:

Երաշխիքի գումարը կամ դրա մի մասը Բենեֆիցիարին վճարելու պահից վճարված գումարը դիտարկվում է որպես Երաշխավորի հանդեպ Պրինցիպալի պարտավորություն /Համաձայնագրի ողջ տեքստում այսուհետ՝ Վճարման ենթակա գումար/,

3.3.3. Պահանջը ստանալուց հետո 1/մեկ/ բանկային օրվա ընթացքում այդ մասին գրավոր՝ կապի գործող միջոցներով /փոստ, էլ. փոստ, ֆաքսիմիլ վերարտադրություն և այլն/ տեղեկացնել Պրինցիպալին,

3.3.4. Բենեֆիցիարին Երաշխիքի գումարը կամ դրա մի մասը Բենեֆիցիարի գրավոր Պահանջի հիման վրա վճարելուց հետո 1/մեկ/ բանկային օրվա ընթացքում այդ մասին գրավոր՝ կապի գործող միջոցներով /փոստ, էլ. փոստ, ֆաքսիմիլ վերարտադրություն և այլն/ տեղեկացնել Պրինցիպալին:

3.3.5. պահպանել Համաձայնագրի գաղտնիությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

3.3.6. Պրինցիպալի կողմից Համաձայնագրով ստանձնած պարտավորությունները կատարելուց հետո Պրինցիպալի պահանջով վերջինիս տրամադրել պարտավորության լրիվ կամ մասամբ /եթե այն կատարվել է մասամբ/ կատարումը հավաստող քաղվածք,

**3.4. Պրինցիպալը պարտավոր է՝**

3.4.1. կրել պատասխանատվություն ՀՀ օրենսդրության շրջանակներում իր կողմից Երաշխավորին ներկայացված փաստաթղթերի իսկության և արժանահավատության համար,

3.4.2. յուրաքանչյուր ամիս Երաշխավորին գրավոր տեղեկացնել Հիմնական պարտավորության կատարման ընթացքի մասին,

3.4.3. Պահանջը ստանալու վերաբերյալ Երաշխավորի կողմից ծանուցվելուց հետո 1 /մեկ/ բանկային օրվա ընթացքում վերջինիս ներկայացնել Երաշխիքի կատարման անհրաժեշտությունն առաջացնող վիճակը և պատճառները բացատրող տեղեկություններ և փաստաթղթեր:

Սույն ենթակետով նախատեսված պարտականությունը գործում է այն դեպքում, եթե Երաշխիքի տեքստով նախատեսված է, որ Երաշխիքի գումարը կամ դրա մի մասը Բենեֆիցիարին վճարվում է վերջինիս կողմից Պահանջը հիմնավորող պատշաճ ձևակերպված բոլոր փաստաթղթերը Երաշխավորին ներկայացնելու դեպքում, հակառակ դեպքում՝ նշված տեղեկությունների և փաստաթղթերի ներկայացումը պարտադիր չէ:

3.4.4. Երաշխիքի գործողության ընթացքում վճարել Երաշխավորի ներքին /Երաշխիքների տրամադրման գործընթացը կարգավորող/ ակտերով նախատեսված այլ պարտադիր վճարները, որոնք կարող են Երաշխավորի կողմից միակողմանի փոփոխվել:

3.4.5. Համաձայնագրի 3.3.4 ենթակետում նշված տեղեկացման պահից 3 /երեք/ բանկային օրվա ընթացքում մարել Վճարման ենթակա գումարը՝ այն Երաշխավորի դրամարկղ մուտքագրելու կամ տեղեկացման մեջ նշված բանկային հաշվին կամ իր համապատասխան ընթացիկ հաշվին մուտքագրելու միջոցով:

3.4.6. փոխհատուցել Երաշխիքի՝ այլ բանկի կողմից հաստատվելու և/կամ ծանուցվելու հետ կապված Երաշխավորի կատարած ծախսերը /այդ թվում՝ այլ բանկին վճարված գումարները/,

3.4.7. ձեռնարկել հատուկ միջոցառումներ, կատարել համապատասխան ներդրումներ կամ մշակել և իրականացնել միջոցառումներ՝ էկոլոգիական և/կամ սոցիալական ազդեցություններից խուսափելու կամ դրանք մեղմացնելու և/կամ իր գործունեությունը Երաշխավորի կողմից իրականացվող մոնիթորինգի և հաշվետվողականության պահանջներին համապատասխանեցնելու նպատակով,

3.4.8. անմիջապես, սակայն ոչ ուշ, քան մեկօրյա ժամկետում գրավոր ծանուցել Երաշխավորին իր գործունեության հետ կապված տեղի ունեցած կամ հավանական այնպիսի դեպքերի մասին, որոնք կարող են բացասական և/կամ վնասակար ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի, մարդկանց /աշխատակիցների, հարևանությամբ բնակվողների, հաճախորդների/ առողջության կամ անվտանգության վրա, այդ թվում` տվյալ դեպքերի կամ դրանց հետևանքների վերացման ուղղությամբ իր կողմից ձեռնարկված /ձեռնարկվող, ձեռնարկվելիք/ միջոցառումների մասին: Մասնավորապես` նման դեպքեր են հանդիսանում.

3.4.8.1. ՀՀ նորմատիվ իրավական ակտերի պահանջով պետական մարմիններին պարտադիր տեղեկացման ենթակա, էկոլոգիական, առողջապահական և աշխատանքային անվտանգության ոլորտի հետ կապված դեպքերը,

3.4.8.2. մթնոլորտի մեծածավալ աղտոտման, մարդկանց մահվան կամ նրանց հոսպիտալացում պահանջող ծանր վնասվածքների պատճառ հանդիսացող դեպքերը,

3.4.8.3. ԶԼՄ-ների միջոցով կամ այլ կերպ հանրությանը հայտնի դարձած այլ նմանատիպ դեպքեր:

3.5. Սույնով Պրինցիպալը հավաստում է, որ.

3.5.1. ինքը և իր կողմից իրականացվող գործունեությունը համապատասխանում են էկոլոգիական, առողջապահական և աշխատանքային անվտանգության և հանրային իրազեկման ոլորտի ՀՀ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին:

Դրա հետ կապված` Պրինցիպալը պարտավոր է Երաշխավորին, վերջինիս պահանջով, ներկայացնել սույն կետում նշված փաստերը հավաստող համապատասխան հիմքեր /ապացույցներ/, ինչպես նաև Երաշխավորին գրավոր ձևով տեղեկացնել իրեն հայտնի, սույն կետում նշված պահանջների ցանկացած անհամապատասխանության, ինչպես նաև այն վերացնելու ուղղությամբ իր կողմից ձեռնարկված և ձեռնարկվելիք միջոցառումների մասին:

3.5.2. ինքը և իր կողմից իրականացվող գործունեությունը չեն հանդիսանում որևէ դատավարության առարկա` կապված էկոլոգիական, առողջապահական և աշխատանքային անվտանգության ոլորտի իրավական ակտերի պահանջների խախտումների հետ:

## *4. Վճարման ենթակա գումարի վերադարձնելիության ապահովվածությունը և Կողմերի պատասխանատվությունը*

4.1. Համաձայնագրով Պրինցիպալի կողմից Երաշխավորի հանդեպ ստանձնած պարտավորությունների /ներառյալ` Երաշխիքի գումար, կոմիսիոն վճարներ, միջնորդավճարներ և նախատեսված տուժանքներ/ կատարումն ապահովված է Պայմանագրի 3.1 կետում նշված ապահովման միջոցներով:

4.2. Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների չկատարման դեպքում Երաշխավորն իրավունք ունի պարտավորությունը ժամկետանց դառնալու պահից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իր պահանջի բավարարումն իրականացնել ինչպես Համաձայնագրի 4.1 կետում, այնպես էլ Պայմանագրում նշված գրավի պայմանագրերով գրավադրված գույքերի հաշվին:

4.3. Վճարման ենթակա գումարի մարումը Համաձայնագրի 3.4.5 ենթակետով և/կամ Միջնորդավճարների/կոմիսիոն վճարների վճարումը Համաձայնագրի 2.3 և/կամ 2.4 կետերով սահմանված ժամկետ/ներ/ում/կարգով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպք/եր/ում Պրինցիպալը Երաշխավորին վճարում է տույժ` ժամկետանց գումար/ներ/ի 0,13 տոկոսի չափով` կետանցի յուրաքանչյուր օրվա համար:

4.4. Համաձայնագրով նախատեսված Տուժանքի (տույժի և/կամ տուգանքի) փաստացի կիրառման դեպքում Տուժանքի տարեկան դրույքաչափը և/կամ Տուժանքների հանրագումարի չափը գործում է ՀՀ օրենսդրությամբ նշված թույլատրելի առավելագույն չափերի սահմաններում:

## *5. Այլ դրույթներ*

5.1. Համաձայնագրից բխող ծանուցումները պետք է լինեն գրավոր` Համաձայնագրի 6-րդ հոդվածում նշված կամ այլ եղանակով միմյանց տրամադրված` Կողմերի փոստային կամ էլեկտրոնային հասցեներով, իսկ վերջիններիս փոփոխման դեպքում` /եթե հասցեի փոփոխության մասին ծանուցվող Կողմը պատշաճ տեղեկացրել է մյուս Կողմին/ փոփոխված հասցեներով` ծանուցումը ուղարկելու և/կամ ցանկացած այլ հեռահար կապով ծանուցումը մյուս Կողմին հասանելի դարձնելու միջոցով.

Կողմերը կարող են ծանուցումների առկայության մասին տեղեկացվել բանավոր` ձայնագրվող հեռախոսակապով գրավոր ծանուցումն ընթերցելու և/կամ դրա հասանելիության մասին միմյանց իրազեկելու միջոցով:

Ընդ որում ծանուցվող Կողմը համարվում է պատշաճ ծանուցված, եթե ծանուցող Կողմը ապահովել է սույն կետում սահմանված եղանակներից որևէ մեկով գրավոր ծանուցման հասանելիությունը ծանուցվող Կողմին` անկախ նրանից, թե վերջինս փաստացի երբ է ստացել ծանուցումը:

5.2. Սույնով Կողմերը համաձայնում են, որ Պրինցիպալը համարվում է պատշաճ ծանուցված նաև այն դեպքում, երբ Համաձայնագրի փոփոխությունները և/կամ այլ տեղեկություններն/ծանուցումներն ուղարկվել են Պրինցիպալի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով, և առկա է այն ստանալու մասին էլեկտրոնային հավաստում, եթե նույնիսկ բացակայում է այն կարդալու մասին էլեկտրոնային հավաստումը: Այս դեպքում Պրինցիպալը համարվում է պատշաճ ծանուցված ծանուցումն ստանալուն հաջորդող 5-րդ /հինգերորդ/ օրվանից:

5.3. Համաձայնագրից ծագած պարտավորություններով հաշվանցի կատարումը Երաշխավորի և Պրինցիպալի միջև կարող է իրականացվել միայն Երաշխավորի կողմից` միակողմանի:

5.4. Համաձայնագրից բխող` Պրինցիպալի կողմից կատարված ցանկացած վճարում ուղղվում է Պրինցիպալի` Համաձայնագրից բխող պարտքի մարմանը, որոնց հերթականությունը որոշում է Երաշխավորը:

5.5. Համաձայնագրից ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են Կողմերի փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում` ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6. Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների կատարումը պարտադիր է Կողմերի իրավահաջորդների համար:

5.7. Համաձայնագրում փոփոխություններ և/կամ լրացումներ կարող են կատարվել բացառապես Կողմերի ստորագրությամբ /կնքված/ գրավոր համապատասխան փաստաթուղթ կազմելու միջոցով

5.8. Համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, 2 /երկու/ հավասարազոր օրինակներից: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5.9. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման /կնքման/ պահից և գործում է **մինչև 07 հուլիսի 2025թ. ներառյալ**, սակայն, ամեն դեպքում, մինչև Համաձայնագրով Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

*6.* ***Կողմերի հասցեները և ստորագրությունները***

| | |
|---|---|
| Երաշխավոր | Պրինցիպալ |
| **«Ամերիաբանկ» ՓԲԸ** | **«ՄԱՔՍ ՕՒԼ» ՍՊԸ** |
| ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 2 | ՀՀ, ք. Երևան, Էրեբունու փ., 12/4 |
| ՀՎՀՀ՝ 02502212 | Էլ. փոստ՝ aramasatryan83@mail.ru |
| Վճարային գործիքների և էքրոու գործառնությունների բաժնի ղեկավար՝ | ՀՎՀՀ՝ 02662703 |
| | Գործադիր մարմնի ղեկավար՝ |
| Գայանե Միրզոյան ........................ | Կամո Մելքոնյան........................ |
| Կ.Տ. | Կ.Տ. |